

ԳԵՐՈՒԹԻՒՆ

Իր բընութեան գերին է ամէն անհատ կեանքի մէջ.
Մին իր մըտքին սեւեռման, մէկն իր սըրտին բըռնութեան,
Ուրիշ միւր սուր բընագոյին, բընագոյներուն անհամար
Որոնց կ'ըսենք խառնըածք, ճակտին գրուած գիր մը կամ:

Եւ մըղումներ որոնց դէմ կարելի չէ դիմադրել.
Սէրեր՝ որոնց յորձանքէն անհրնար է ազատիլ.
Նոր վըտանգներ որոնցմէ անկարելի է խոյս տալ.
Յաւեր՝ որոնք չես կրնար չըպատճառել սիրելոյն.

Վիշտեր՝ մընալ որոնց դէմ անդըրդուելի, չես կրնար:
Կեանքը մարդուն գահավէժ լեռնէն իջնող ձիւնակոյտ
Մ'ըլլար կարծես, որուն դէմ ամէն պատուար անօգուտ՝
Եւ ամէն երգ՝ անկատար խաղարկութիւն մ'է ունայն:

Կը զգաս մըտքիդ խորերէն թէ բարիք չէ քեզ համար
Ըստրուկն ըլլալ բընութեանդ, բայց չես կրնար ազատիլ
Բընագոյներուդ բըռնացող, գերեվարող չար ուժէն
Մըտալլկիչ սեւեռման այս հոգեդաւ յոյզերէն:

ԱՆԵԼ